

ԱԼԻՇԱՆԻ ՊԱՏՄԱՅԵՑՈՒԹԻՒՆԸ «ՀԱՅՐՈՒՆԻ» ՀԱՏՈՐՈՒՄ

ԺԵ.-ԺԷ. դարերի հայոց հասարակական-քաղաքական կեանքի բարդագոյն շրջափուլի մասին մեզանում շատ է խօսուել: Պայմանաւորուած ստեղծուած պատմաքաղաքական հանգամանքներով, աշխարհագրական դիրքով ու ոչ քրիստոնեայ հարեւանների չղաղարող ոտնագութիւններով, դարեր շարունակ պետականութեան ու պետական հաստատութիւնների բացակայութեամբ, մի կատարեալ անկեալ վիճակի հասած ժողովրդի համար պատմական ժամանակը քննութեան էր դրել ֆիզիկական գոյատեւման, աշխարհագրական հայրենիքը չկորցնելու, հոգեւոր ինքնաստեղծումի ու մշակութային ինքնութեան խնդիրը: Երկար մի շրջան տեւող անկումից յետոյ Հայաստանի հոգեւոր-մշակութային կեանքը զարթօնքի նշաններ է ցուցադրում: «Շահ-Արասի գերեվարութիւնից յետոյ,- գրում է Լէոն իր «Հայոց պատմութեան» մէջ,- «մենք կանգնեցինք մեր պատմութեան ամենազարմանալի ու հրահանգիչ երեւոյթներից մէկի առջեւ», որ «ազգային-կուլտուրական զերածնութեան մի դարագիլիս սկիզբն է հայութեան համար», «լուսաւոր շարժում... մարդկային կեանքի ստեղծած մի հրաշք»¹: Ապա մանրամասն քննութեան ենթարկելով ստեղծուած պատմաքաղաքական հանգամանքները՝ Լէոն կանգ է առնում հոգեւոր-մշակութային տեղաշարժերի վրայ՝ ուրուագծելով գրականութեան զարգացման միտումները. «ԺԵ. դարի հայոց գրականութիւնը,- գրում է գրականութեան պատմաբանը, - հանդես է բերում մեծ զարգացման անտարակուսելի նշաններ: Մեր առջեւ բացւում են երկու խոշոր երեւոյթներ, որոնք տրոհում են գրականութիւնը եր-

1 Լէօ, Հայոց պատմութիւն, հատոր երրորդ, գիրք առաջին, Երեւան 1969, 266: «Նորոգութեան շրջամի հայ գրականութեան պատմութիւնը 17-18-րդ դարերում» առաւել մանրամասն՝ տե՛ս ՍԱՐԻՆԵՍՆ, Ս., Հայոց գրականութեան երկու դարը, հատոր 6, Ստեփանակերտ 2015, 5-34:

կու մասի: Մէկը մեր հին իրականութեան շարունակութիւնն է, այսինքն այն, որ հայ գրողները, գլխաւորապէս մայր հայրենիքում, աշխատում են կենդանի պահել մեր ազգային գրականութեան վաղեմի եւ հարազատ նիւղերը՝ պատմագիտութիւն, բանաստեղծութիւն, մասամբ եւ աստուծաբանութիւն: Միւս երեւոյթն արդէն արդիւնք է նոր գարգացող հասարակական եւ քաղաքական պայմանների ու կատարեալ նորութիւն է ներկայացնում հայ կեանքի համար: Այս մասն ամենասերտ կերպով կապուած է հայկական տպագրութեան հետ, որ մարմնացնում է հայոց կուլտուրական աշխատանքի ամենաուժեղ հոսանքը ԺԷ. դարում»²: Իր «Խրուագընթեր ԺԹ. դարի հայոց գրականութիւնից» աշխատութեան մէջ Մանուկ Աբեղեանը, ներկայացնելով պատմական այս ծանրագոյն ժամանակը, գրում է. «Պէտք էր հայութեանը փրկել վերջնական անկումից եւ վայրենացնումից: Եւ ահա ԺԷ. դարում սակաւաթիւ լաւագոյն մարդկանց բոլոր ճգուռմը կենարոնանում է այն բանի մէջ, որ կենդանացնեն մեռնող հայ կեանքը: Դրա համար երկու նանապարհ է ներկայանում նրանց- վերածնել հին հայ կեանքը, գիրն ու գրականութիւնը եւ ապա օգտուել երոպական լուսաւորութիւնից, որ մեր նոր գրականութեան համար նոյն դերը պիտի խաղար, ինչ որ բիւզանդականը մեր հին գրականութեան համար»³:

Ազգային կեանքի հէնց այս շրջադարձային կէտի վրայ են հայ գրագէտները տեսնում Մխիթարեան հայրերի հայագիտական, լայն իմաստով՝ պատմայ-մշակութաբանական գործունէութիւնը: Մխիթարեան հայագիտութեան մէջ իր բացառիկ մեծութեամբ ու գիտայ-գեղարուեստական ժառանգութեամբ յառնում է Հայր Ղեւոնդ Ալիշանի կերպարը: «Ալիշանին ոգիին մէջ ամբողջ Մխիթարեան առաքելութիւնը կը տեսնեմ: Նոյնիսկ ինչ որ Մխիթարի՝ իրենց հանճարային հիմնարդին մէջ դեռ տարտամ ու անկատար, դեռ ներշնչումի եւ ձևումի վիճակին մէջ էր, եկած խոացած ու ի գործ փոխուած է Ալիշանի մէջ. Ու ան եղած է հնոցը, ուր երկդարեան միաբանութեան մը բոլոր ներշնչումներն ու բաղանքները, բոլոր իտեղներն ու ներգօրութիւնը՝ լեցուած, լեցուած ... ու եռեփուած է՝ ի յայտ բերելով ոսկեղեն կենսունակութիւն մը, Մխիթարեան Առաքելութեան թանկագին յուշարձանը»⁴, - Վարուժանի

2 Անդ, 349:

3 ԱԲԵՂԵԱՆ, Մ., Երկեր, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք Բ., Երեւան 1970, 546:

4 ՎԱՐՈՒԺԱՆ, Դ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3, Երեւան 1987, 182:

խօսքերն են, որ արտասահմանը է 1913ի Հռկտեմբերի 27ին, Բերայի թոքատլեան ճաշասրահում գումարուած Մուրատ-Ռափայէլեան միութեան կանոնադրական հանդէսում:

Բազմաթիւ են Հայր Ալիշանի հայագիտական գործունէութեան բնութագրման ու արժեւորման փորձերը, բայց մինչ համագային գնահատումի եւ սիրոյ շրջափուլը, նախորդել է տիտանական մաքառման ու ինքնանուիրումի մի բացառիկ պատմութիւն, որը, թերեւս արժէ յիշել մի քանի գրուագով:

1843 թուականին, «Բազմավէպ» հանդէսում տպագրուում է երիտասարդ վանականի՝ Ալիշանի «Եղծ անմիաբանութեան հայոց» յօդուածը՝ սկիզբ դնելով հայագիտական ու հայրենագիտութեան մի ահոելի ժառանգութեան (շուրջ 60 հատոր), որ մինչեւ օրս կարօտ է ամբողջական հրատարակութեան ու քննութեան:

1847ի Յուլիսին, դարձեալ «Բազմավէպ»ում տպագրուում է Ալիշանի «Հայոց աշխարհիկ» բանաստեղծութիւնը՝ ստորագրուած «Նահապետ» անունով: Նոյն տարին գրական հասարակութիւնը մեծագոյն խանդավառութեամբ է ընդունում Նահապետի «Պլազմն Աւարայրի» պօէմը, ապա իրար են յաջորդում «Խորամ զբեզ, Հայոց աշխարհ», «Հրազդան» (1848), «Մասիսու սարերն» (1849), աւելի ուշ՝ «Լուսնիկյան գերեզմանաց հայոց» (1858), «Հայ հայրենիք» (1858) եւ այլ բանաստեղծութիւններ, որոնք այնպիսի լայն արձագանք գտան ու ճանաչում բերեցին հեղինակին, որ շուտով՝ 1858ին, հրապարակուեցին «Նուագների» երրորդ՝ «Հայրունի» հատորում՝ կազմելով մի առանձին շարք կամ բաժին, որ պարզապէս խորագրուած էր «Նահապետ»: Այս հրատարակութիւնը ներառում էր նաև «Նուշանն Շաւարշանայ» եւ «Աշոտ Երկար ի ծովուն Սեւանայ» գործերը: 1867ին վերահրատարակուած շարքին Հայր Ալիշանն աւելացրեց «Վերջին երգ վիրաւոր բամբուահարին», «Հայ հանճար» բանաստեղծութիւնները՝ լրումի հասցնելով ստեղծագործական մտահղացումն ու այն տպագրութեան յանձնելով «Նահապետի երգեր» խորագրով: Նպատակը, որ գրաւել էր Ալիշանի ողջ էութիւնը, իմաստաւորել նրա իդելը ու երազները, գտնուել էր՝ Ազգն ու Հայրենիքը, ու նրա ստեղծագործական տարերքը դուրս բերել իմաստի ճանաչման նոր ու լուսաւոր հորիզոններ: Եթէ հետեւ լրու լինենք փիլիսոփայական էսթետիկային՝ գրականութիւնը, իբրեւ ժողովրդի ինքնագիտակցման ձեւ, նշանային իմաստով՝ նրանական է նրա պատմութեանը, եւ, մեր յօդուածի՝ գիտական խնդրի ձեւակերպման պարագայում, իւրօրինակ փիլիսոփայական հայեցակարգ է ձեւաւորում՝ ուղիղ շաղկապելով Ալիշանի պատ-

մահայեցութիւնը «Հայրունի» հատորի առաւելապէս գրաբար բանաստեղծութիւններին, ապա ըստ հայ եկեղեցու տօնացոյցի շարակարգուած, «Յուշիկ հայրէնեայց հայոցի» ՅՅ չքնաղ դրուագ-պատումներին:

Հայոց պատմութիւնը, հայագիտութիւնն ու Մխիթարեան հայրերը: Այս հարցերը մեզանում շատ են արծարծուել, քննարկուել են հայոց մատենագրութեան ուսումնասիրութեան ու Մխիթարեան պատմագիտութեան դոկտրինները, փաստական հիմնաւորումներով մեկնաբանուել, թէ Մխիթարեան տունը ինչ խորագիտութեամբ ու բացառիկ գիտական-ակադեմիական պատուախնդրութեամբ է քննութեան առել, համակարգել ու ընդհանրացրել հայագիտութեանն առնչուող ցանկացած խնդիր. «Ապա այս մարդիկը,- գրում է Աբեղեանը,- մեծամեծ, իսկապէս հիացմունք պատճառող ջանմերով աշխատում են կարդալ եւ հասկանալ մեր անհավանալի դարձած ու մոռացուած գրականութիւնն ամրող, թէ եկեղեցական, եւ թէ աշխարհիկ բնաւորութիւն ունեցող ձեռագիրները՝ ինքնուրոյն թէ բարգմանական երկերը՝ որքանով որ կային կամ ճարում էին: Նրանք արտագրում են բազմաթիւ նոր ձեռագիրներ, աշխատում են գտել ունիթուների ձեռով լատինացած գրաբար լեզուն յօրինում են քերականութեան, տրամարանութեան եւ այլ նոր դասագրքեր՝ օգտուելով գլխաւորապէս հին գրքերից, եւ նոյնիսկ բարգմանութիւններ եւ են անում»⁵: Միայն այն հանգամանքը, որ Միաբանութիւնը իրեւ առաջնային նպատակ ձեռնարկեց հայ դասական մատենագրութեան ու ընդհանուր պատմութեան կոթողային յուշարձանների հրատարակութիւնը, յատակ խօսում է Մխիթարեանների՝ հայագիտութիւնն իրենց գործունէութեան ելակէտ ու սկզբունք դիտարկելու յանձնառութեան մասին:

Նրանք իրենց նպատակադիր ու համակարգուած աշխատասիրութեամբ մի քանի բնագաւառուներում՝ աստուածաբանական-հայրախոսական, ծիսային-մեկնարդաբանական, բանասիրական ու պատմագիտական, խնդիր ունէին ճանաչել տալ հայ ժողովրդին իր պատմութիւնն ու մատենագրութիւնը, այդ նպատակով յատակ համակարգի ենթարկել ու վերակենդանացնել գրաբարը, հայոց իմացականութիւնը հաղորդակից դարձնել անցեալից մեզ ճառանգուած պատմագրական ու իմաստասիրական երկերի բարձր մշակովիցին:

5 ԱԲԵՂԵԱՆ, Մ., Երկեր, Հայոց հիմ գրականութեան պատմութիւն, գիրք Բ., Երևան 1970, 546:

Միխիթարեանները գիտնականները էին նախ եւ առաջ, ոռնք հայ իմացականութիւնը բարձրացրին պատմականութեան ու պատմութեան փիլիսոփայութեան գիտակցմանը:

Ի սկզբանէ բնական ձգտում ցուցաբերելով արեւմտեան աշխարհակեցութեան ու լուսաւորչական գաղափարների նկատմամբ՝ **Միխիթարեան** կաճառը իր գործունէկութեան առաջին օրուանից հայ մտածողութիւն առբերեց կարգ, մեթոդ, գիտականցում հասկացութիւնները՝ փորձելով դարեր տեւած արեւելեան մտածողութեան դանդաղամիտ թմբիրից, միՓական աշխարհընկալումի գետնամած յոգնածութիւնից դուրս քաշել ազգային մարմնի գոյութիւնն իմաստաւորող գիտակցուած, կանոնաբերուած **Միտքը,** Կարգը, այս հիմունքով ձեւակերպուող ազգային գաղափարաբանութիւնը: «Մերոտի, յստակուրեան, կարգաւորութեան պակասը ամենէն զգալի եւ ամենէն ծանր թերութիւնն է, որ ի յայտ կուգայ ժաղաքականութեանն ինչպէս եւ գրականութեանը մէջ մեր ժողովրդին, որ ինչքան ալ միշտ մղուած ըլլայ դէպ ի Արեւմուտք, Ասիացիի տարտամութիւնն ու թանձրութիւնն շատ բան պահած է միշտ»⁶, - **Միխիթարեանների** գործունէկութեան ելակէտն այսպէս է տեսնում Արշակ Չոպաննեանը, ապա ձեւակերպում պատմական այն յեղաշըջիչ առաքելութիւնը, որ յանձն առան միաբանութեան հմուտ հայագէտները: «Սերտ շփումը զոր Միխիթար եւ իր յաջորդներն ունեցան եւրոպական աշխարհին հետ, իրենց փոխանցեց այն մեծ յատկութիւնը որով Արեւմուտքը յաղթեց Արեւելքին, - մէքոտիկ գործունէկուրեան յատկութիւնը: Բառարանները, կրօնական ու պատմական գրքերը... եւրոպական հրաշակերտներու խնամու թարգմանութիւնները, ...Հայոց հին մատենագիրներու գործերուն կոկիկ տպագրութիւնը, մեր մէջ կը մտցնէին՝ կարելի է ըսել առաջին անգամն ըլլալով՝ այդ մեծ ու բեղուն նորութիւնը կանոնար, գիտակից, ներիուն աշխատութեան, զոր Արեւմուտքը սորվեցուց Միխիթարյաններուն եւ զոր անոնքն իրենց հայրենիքի եղբայրներուն սորվեցուցին»⁷: Հայոց ազգային գոյութեան առաջնահերթութիւնը միաբան հայրեան հայրեանը կապում էին լուսաւորութեան ու քաղաքակրթման գաղափարի հետ. «Քանզի են ի մէջ այլ ազգեաց եւ ի մէջ գերութեան, վասն այսորիկ առաւել հարկանորոն հայոց ազգի ուսմունք»⁸: Զարմանալի մի իրողութիւն է տեղի ունենում հայոց իրականութեան մէջ. **Միխիթարեանները** միանդա-

6 ԶՈՊԱՆԵԱՆ, Ա. Դէմքնը, Փարիզ 1924, 71:

7 Անդ:

8 ԷԶՐՈՒՄԵՑԻ, Խ., Գիրք Քերականութեամ, Լիվեոն 1696, 2:

մից Հայաստանը պոկում են միջնադարեան խաւարչտին անցեալից ու կանգնեցնում եւրոպական քաղաքակրթութեան ճանապարհին, հայ գեղագիտական միտքը բարձրացնում դարաշրջանի եւրոպական մտածողութեան աստիճանին։ Նկատի պիտի ունենալ, որ Արեւմուտքն էլ անծանօթ էր հայկական իրականութեանը, եւ առաջին անգամ էր թերեւս այդքան խորութեամբ ու բազմակողմանիորէն առնչւում հայկական մշակոյթին։

Միիթարեան տունն ըստ էութեան գիտականացրեց հայ միտքը, հիմք դրեց մեր հոգեւոր ստեղծումների գիտական պատմութեանը՝ փաստայ-աղբիւրագիտական հսկայական նիւթի համակարգումից յետոյ միանգամայն սկզբունքային իմաստ տալով առանձին առարկաների եւ գիտածիւղերի ստոյգ սահմանմարով առանձին առարկաների միտքում է, որ 1810 թուականի Օնը։ Հայր Լեւոն Զեքիյեանը վկայում է, որ 1810 թուականի Օգոստոսի ժի Տեպտեմբերի 8), երբ, ի պատասխան Ստեփանոս Ագոնցի աղերսագրի, կայսերական հրովարտակով երաշխաւորուեց⁹ Միիթարեան միաբանութեան Մայրավանք Սուրբ Ղազարի գոյատեւումը «իր ներկայ վիճակին մէջ», «Միիթարի Հայկացնեան բառարանի կողին՝ Միաբանութիւնը մէջտեղ դրած եր արդէն շուրջ 280 հատորներու հրատարակչական պատկառելի աւանդ մը, որոնց միջեւ չէին պակսեր ակադեմիական ուրիշ կորողային գործեր... ինչպէս՝ նոյնինքն Միիթարի Մատրեկի Մեկնութիւնը, Զամշեանի Հայոց Պատմութիւնը, Աւետիքեանի «Նարեկուծ»ը..., (ուրեմն) կը խորիինք, թէ յիշեալ պաշտօնական հանաչումը կը հասներ, պարախորիինք, թէ յիշեալ պաշտօնական անապիսի պահու մը՝ երբ գաներու քերումով անշուշտ, պատմական այնպիսի պահու մը՝ երբ Ս. Ղազարի Ակադեմիան կը բեւակոյնէր իր բազմադարեան գոյութեան ամէնէն քեղուն եւ փայլուն մէկ շրջանը»¹⁰։ Միիթարեանների բառարան միաբանութիւնը այլեւ նպաստամատոյց կ'ըլլար անոր, կ'ապշեցրած գործը նոյնացւում է համալսարանական կամ ակադեկատարած գործը նոյնացւում է համալսարանական կամ կէտի վրայ է միաբուռում միական գործունէութեան, որ նոյն կէտի վրայ է միաբուռում հայկական առաջարարան նրանց առաքելութիւնն ու բացառիկ, կրօնական

9 Տե՛ս ՍԱՐԳԻՍԵՍԻՆ, Հ. Բ., Երկուհարիւրամեայ գրականական գործութեան Վեճետիկոյ Միիթարեան միաբանութեան, Վեճետիկ 1905, 356 «Կայքի վեճետիկոյ Միիթարեան միաբանութեան, Վեճետիկ 1905, 356 «Կայքի սերական այս անակնեկալ վեհոս, որով ոչ միայն ազատ կը բռնուէր Միիթարեան միաբանութիւնը՝ այլեւ նպաստամատոյց կ'ըլլար անոր, կ'ապշեցրած աշխարհը։ Իրաւ է, որ Ակադեմիայի խօսք չկայ այսուղի, այլ ներ բռնոր աշխարհը։ Իրաւ է, որ Ակադեմիայի խօսք չկայ այսուղի, այլ «Monaci Armeni» պարզապէս, բայց լուելեայն կը հասկցուի այն նապուլիական աշխարհացարար հաղորդուած տեղեկագրերէն։ Դարձեալ դիտելու լունին նախանքացարար հաղորդուած տեղեկագրերէն։ Դարձեալ դիտելու հայ կրօնաւորներու կատարած գործը»։

10 ԶԷՔԻՆԵՍԻՆ, Հ. Լ., Հայապատում ներտողային, Լու Անշելես 2001, 69:

ասկետիզմով կարգաբերուող ռացիոնալիզմը, որ էր ըստ էռութեան նրանց աշխարհայեցքի հիմունքը:

Բացառիկ տեղ յատկացնելով պատմագրութեանը՝ շուրջ մէկդարեայ երկարատեւ ու տքնածան նախապատրաստութիւնից յետոյ միայն, բնագրային միաւորների, ընդօրինակութիւնների համեմատութիւն, Մայրավաճքի Մատենադարանի ստեղծում ու ձեռագրերի նկարագրութիւն ու ծանօթագրութիւններ, կցուող բանասիրական աշխատութիւններ ու դիդակտիկ-մեկնաբանողական նախաբաններ, Միիթարեան հայրերն անցան հայ դասական մատենագրութեան բնական հրատարակութեանը՝ արդէն Ժ. դարում: 1828ին Միիթարեանները տպագրութեան են պատրաստում Եզնիկի «Եղծ աղանդոցը», 1827ին Խորենացու «Պատմութիւնը», ապա Եղիշէ, Ագաթանագեղոս եւ ուրիշներ: Ազգային գոյութեան հիմունքը կազմող կենսական նշանները՝ գիրականութիւնը, լեզուն, պատմութիւնը, բարոյական ու ընթը, գրականութիւնը, վերահաստատող մեր հին հայրէնները, շարականները, մագաղաթեայ մատեանները վերադառնում են նոր ընթերցումով՝ վերականգնելու, վերստեղծելու, աւերակեններից դէպի կեանք վերակոչելու ժԹ. դար հասած հայ ժողովրդի տառապեալ բեկորները:

Ահա այս կէտում է տեղի ունենում Հայր Ղեւոնդ Ալիշանի ու հայոց պատմութեան «Հանդիպումը»: Հայոց պատմութիւն առաջանա այս բնագրում հաստատապէս նշանակիր է եւ ներկայացնում է Բանը՝ մշակութարանական լայն իմաստով: «Ինչ զարմանալի հոգերանական քերումն է մարդոյ, որ ի ծագեալ մտարացութեանն՝ ախորժի լսել Պատմութիւն կոչուածը, - գրում է «Հայապատում»ի էջերում, ապա յաւելում, թէ, ...Զարմանիք չէ ուրեմն որ Հայու զաւակն այս սիրէ զՊատմութիւն Հայուն. շատ խորք եւ անկիրք պիտի ըլլայ մէկն՝ որ չզգաց այդ ազգային հանութիւնը, թէ եւ կրնայ նանչնալով օտարայ որպիսութիւնն այլ՝ հաւելի կամ չհաւելի ասոց կամ անոնց եղածին կամ ըրածին»¹¹: Պատմութեան նկատմամբ Հայր Ալիշանի կէտը հանդամանօրէն կապուած է նրա թէ՛ գիտական, թէ՛ ստեղծագործական ժառանգութեան հետ եւ, սկզբնաւորուելով համաշխարհային պատմութիւնից ու բազմաթիւ դրուագներում նոյնանալով «Ծննդոց գրքի» դիպաշարին՝ նախասկզբից մինչեւ աշտարականութիւնը:

11 ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Հայապատում, Խ. Ա., Պատմիչք եւ պատմութիւններից հայոց, Վենտեիկ 1901, 12:

կաշինութիւն ու ջրհեղեղ, Հայկ Նահապետից սկիզբ առած հայկականութեան «ինքնաստեղծման» պատմութիւն, ներսում ահոելի շերտեր է յայտնաբերում՝ հայոց բանահիւսութեան, պատմութեան մէծագոյն արժէքների, եկեղեցու ու պետականութեան, ազգային յիշողութեան ու ինքնագիտակցութեան բանաստեղծական ու իմաստափրական արծարծումներով:

Ճանաչել ազգային ինքնութիւնը, էթնիկական գենը, ըստ Ալիշանի, ենթադրում է ճանաչել ազգային յիշողութիւնը՝ նիւթական ու հոգեւոր արարումների ամբողջութիւնը, որը գոյութեան իրաւունքն է մի ամբողջ ժողովրդի: «Ազգային պատմութիւնը ամէն ազգի յատուկ սրբազն գիրքն է», - ասում է, ապա բոլոր գիտութիւնների մէջ առանձնացնում ոչ թէ «չոր ու ցամաք դիպուածներու պատմութիւնը», այլ, «ժողովրդուց վարքը պատմող իբրև մէկ մարդու վարք կամ մէկ ընտանեաց մը» ազգային կենսագրութեան ասքը՝ «ամէնքն ալ (գիտութիւնները), հարկաւոր կը սեպեմ քիչ շատ, պատմութիւնը ամենահարկաւոր սեպելես ետեւ»¹²: Հայոց պատմութեան իմացաբանութիւնն Ալիշանի համար երկու ելակետ ունի՝ Կստուածաշունչ եւ Խորենացի, եւ իր պատկերացրած պատմութեան բնագրի մէջ այդ երկու հիմունքները ձեւաւորում են փոխադարձ ազգեցութիւնների մի հետաքրքրիր ու նպատակամէտ շրջանակ: «Այն սակաւաւոր անձանց մէն է աս վարդապետը, որ թէ իրենց անարատ վարքովը, թէ ազգին բարերար ըլլալով եւ թէ օտարաց օգտակար, արժանապէս մեծ կըսուին երկրիս վրայ ալ, երկինքն ալ: Հայաստանի երկու հազար տարուան հիւսած ուսումնական պասկին ամենեն պայծառ ծաղիկն է: Մեր ազգին բարերարաց մէջ այնչափ իրաւունք ունի առաջին ըսուելու, որչափ որ անոնց շատին բարիքն յիշեցնողն ինքն է մինչեւ այսօր...»¹³, - 1847 թուականին «Բազմավէպ»ում լոյս տեսած «Մովսէս Խորենացին եւ իր Հայոց Պատմութիւնը» յօդուածում Պատմահորը արուած այս գնահատականը բնաւ երբեք կասկածի ու երկուութեան չտրուեց, ճիշտ հակառակը՝ մեր Ծննդոց մատեանը յետագայ բոլոր տարիններին դարձաւ նրա գիտագեղաբուեստական բազմաթիւ գործերի սկզբնաղբիւրն ու քննութեան առարկան: «Աս Պատմութիւնը, - Ալիշանի վերադիրներն ամենեւին չափազանցուած չեն եւ ոչ էլ անհող իրականութիւն են բնութագրում, - ինչուան հիմա նաևցուած թէ՛ Մովսէսի եւ թէ՛ Հայաստանի ամենեն պատուական գրաւոր գործքը ըլլալով՝ թէ մեր եւ թէ՛

12 Ալիշան, Հ. Դ., Երկեր, Երևան 1981, 124:

13 Անդ, 136:

օտար ազգաց առջեւ, չենք կրնար հոս լոռութեամբ անցնիլ, վասնզի անով է, որ Հայաստան իր հին ու կորսուած մէկ նաշակը կ'առնէ»¹⁴: Խորենացու «Պատմութիւն»ը առհասարակ հայոց մէջ, իմա՝ Միթարեանների պարագայում արժեւորում է իբրեւ հայկական ինքնութեան կազմաւորման ու ազգութեան իմացութեան մի վկայարան, ազգակազմիչ նշաններով ձեւակերպուած թուղթ ծննդեան ու շարունակութեան, որ իբրեւ «աշխատանքային գործիք» խիստ անհրաժեշտ էր միաբան հայրերին: «Խորենացու «Պատմութեան» առաջին իսկ էջերից, - գրում է Հայր Լեւոն Զեքիյեանը, - երեւան են գալիս երկու հիմնական յղացքներ, որոնք անմիջականորէն առնչում են յունական աշխարհին. դրանցից առաջինն է քանը, երկրորդը՝ քաղաքական կարգը: Բանի, քաղաքական կարգի, չափի իմացումների վրայ հիմուած՝ Խորենացին առաջինն է յայտնաբերում հայ գրականութեան մէջ հայրենիքի կամ ազգութեան մի իմացում, սուկ տոհմային կամ սերնդային արիւնակցութիւնից անդին, իբրեւ միութիւնը համասէր, այլ եւ համալեզու եւ, մանաւանդ, մի հասարակաց պատմական ժառանգութեան, հաւաքական մի հասարակաց գիտակցութեան տէր մարդկանց»¹⁵: Թերեւս այս կարեւորագոյն նշանների՝ «Բանի» եւ «Քաղաքական կարգի» ճանաչման տիրոյթում է ձեւաւորում պատմութեան նկատմամբ Միթարեանների հայեացքը: Հետաքրքիր է առանձնացնել գրեթէ նոյն սահմանումը Խորենացու մասին Ալիշանի վերոյիշեալ յօդուածում. «Բոլոր ան դարը, գրում է վարդապետը, - Մովսէս երկու քանի եւնեւէ եղաւ՝ աստուածապաշտութեան եւ իմաստութեան եւ երկուին մէջ ալ, կրնանքն ըսել, թէ հասակին հետ անեցաւ եւ ան վսեմական զգացմունքներով գրեթէ երկիրս ու իր երկրաւոր նիւթը մոռցած էր...»¹⁶:

Ալիշանը խստօրէն հետեւում է Միթարեան հայրերի, ի մասնաւորի Զամշեանի, Աւգերեանի եւ միւսների պատմահայեցութեանը, իր հերթին վկայելով, թէ Հայաստան «երկիր դրախտավայրը» բիբլիական Արարատի ու Նոյեան տապանի առասպելաբանութեամբ մէր ազգային գոյաբանութեան աստուածաշնորհ տրուածքն է, աստուածատունկ դրախտը՝ առաքելահաստատ եկեղեցով գորացեալ, ու նոյն շնորհով հէնց մեզնով Աստուած զօրավիր կը լինի մեղքերով ծանրացած մարդկութեան նախացեղի վրկութեան: «Հայաստան ինքնին նախախնամէալ երկիր մ" էր, եւ սիրելի Բարձրելոյն, ուր շատ կանուխ եայտնեցաւ. եւ պէտք է որ ասիրելի Բարձրելոյն»:

14 Անդ, 137:

15 Զէքինեան, Հ. 1., Հայապատում ներսողային, 62. աշխ., 170:

16 ԱԼԻՇԱՆ, Հ. 1., Երկեր, 62. աշխ., 137:

մենայն ազգ որ իր ծագումը փնտու՝ դառնայ այդ երկրին նայի: Եղեմայ հետքը գտնելու ապահովագոյն նամբայն է Հայաստան: Ինքն ընծայեց Աստուծոյ իր օրինեալ կար, եւ ընդունեցաւ անոր ձեռքին զհայրն եւ զմայր մարդկութեան .ինքն եղաւ խանձարարուրք առաջին ծնածին եւ գերեզման առաջին մեռնողին, ինքն բարձացուց Արարատայ գագարը միւս անգամ ընդունելու շրհեղեղին ազատուած մարդկութեան մէկ հատիկ տունը...»¹⁷:

Հայր Ալիշանի համար սա սրբազան սահմանն էր, իսկ շարունակութեան մէջ ինքը պարզապէս մի նոր քերթողահայր էր, մոգ՝ Բագրատունու բնորոշմամբ, որ փնտում էր Հայոց աստղը Երկնքում: Եւ ահա բանաստեղծական անպարագիծ ներչնչանքով, պատմական դրուագների ճշմարիտ մեկնութեամբ նա պարզապէս յայտնագործում է Հայաստան- Հայոց աշխարհը՝ ճանաչելով Փիգիկական տարածութիւնը Հայրենիք դարձնող երեք հիմնարար սուբստանցները՝ բնաշխարհը, պատմութիւնը՝ Բանը, ապա թէ մարդիկ: Հայրենիքը առանցքն է Ալիշանի պատմական վերյիշումների, տեղագրական ու աշխարհագրական արձանագրումների, բանաստեղծական ազնուագոյն էջերի: Նրա տաւիզը փորձում է Հայոց աշխարհիկի հեռաւոր ափերում որոնել-գտնել Հայոց հոգին, ապրելու ջիղը, կրակը, որ բոնկւում էր հողի ու Աստծոյ անունով, որ ջնջում է հազարամեակների անջրպետն ու պատմութեան տրոհումը՝ որոնելով ազգային գոյութեան՝ արժանապատիւ ու անկորուստ սահմանը: Նրա բանաստեղծական ներչնչանցը պատմութեան հողից է սնւում: Նախ սթափ հայեացքով, ահուելի փաստական նիւթի գործածութեամբ իր պատմաշխարհագրական հաստոներում Հայոց կենսագրութեան ասքն է հիւսում, ապա այն փոխազրում բանաստեղծութեան ոլորտ: Զարմանալի մի փոխատեղութիւն կայ Ալիշան գիտնականի ու Ալիշան բանաստեղծի միջեւ: Նրա ներսում ստեղծումի լոյսն այնքան շռայլօրէն է ճառագում ու մտածողութիւնն այնքան պատկերաւոր է, որ կլասիցիզմի տաղաչափական ձեւոյթը Հայրենասիրական էկզալտացիայի ու ներքին բոցավառման կրակը, բազում գոյներն ու յոյզերը հազիւ է թաքցնում, իսկ գիտականութեամբ ստոյգ ու կանոնիկ հատորների բնագրերը երբեմն ճեղքուում են՝ տեղ բացելով գեղարուեստական չքնաղ ձեւի մէջ ստեղծուած բանաստեղծական կատարեալ կտորների համար:

Այստեղ է Ալիշանի ե'ւ գիտութիւնը, ե'ւ բանաստեղծութիւնը:

17 ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Յուշիկի հայրենեաց հայոց, Բ. տպ. Վենետիկ 1921, 70:

«Այլ ես սիրեմ եւ առաւել սիրեմ զհայաստան հայրենիս իմ, ե՛ւ գնեյն սէր ամխիղն քարոզեմ ամենեցուն եւ ասեմ, պարտք են Զեր որդիի հայկաց նանաչել զինչ են հայրենիք... նանաչել եւ պահել անվար զսեփական շնորհ ազգիս, զլեզու նորա, զպատմությիւն նորա եւ զփառս զանուան նորա: Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն»¹⁸, - ասում է ու Աստծոյ եւ Հայրենիքի ամենազօր սիրոյ տիեզերական գոյութեան վկայումներում փիլիսոփայական իւրօրինակ հանրագումարի բերում հայոց լինելիութեան ողջ ժամանակը՝ իր հայրենապանծ հերոսներով, նշանաւոր ճակատամարտերով, յանուն հայոց տան ու Քրիստոսի հաւատքի պատմական յաղթանակներով ու մտքի ու լոյսի հանճարների փառապանծ փարքագութեամբ:

Վարդապետը գիտնական է բնութեամբ եւ ով գիտի, թէ որպիսի խոր ազգեցութիւն են թողել հրատարակած հայագիտական ստուարածաւալ հատորները նրա ընդհանուր մտածողութեան վրայ: Բանաստեղծութիւնը, սակայն, նրա գոյութենական սկիզբն էր, «արեւն հոգուոյն մէջ բանտած արծուի», աշխարհը տեսնելու ձեւը, որ եւ բացառիկ գրաւչութիւն էր տալիս նրա ցանկացած ձեռնարկումի: Չոպանեանն ասում էր, թէ «Ալիշանը սիրու մըն էր նաև, բայց շատ մեծ սիրու մը: Այդ սիրտը ամբողջապէս լեցուած էր երկու պարզ ու մեծ զգացումներով, Աստուծոյ սէրն եւ ազգին սէրը, - սէր, որ խորհրդածութեան արդիւնք չէր, քննադատութեան չէր ենթարկած ինքինները, կը հիմնուէր միմիայն աւանդութեան վրայ»¹⁹:

Եւ ահա, պատմութիւնն առաջին հերթին ըստ վաւերականութեան ու վկայուած, աւանդուած փաստերի ճանաչող Ալիշանը անգամ պատմագիտական ու բանասիրական չոր նիւթն էր ներկայացնում գեղարուեստականացուած, իր հայրենանուէր սրտի ու թրթուուն յոյզերի միջով անցկացրած: Նա, իբրեւ հրաշալի գեղագէտ ու էսթետ, որի գրիչը բնորոշւում է չափի բացառիկ գիտակցութեամբ ու զգայունութեամբ, ամէն անգամ ինքն է իր համար հնարաւորութիւնն ստեղծում սառը գիտական շարադրանքը բացառիկ չերմութեամբ պատելու, փայտիայանքի ու հպարտութեան նուրբ ներշնչանքով հայոց կենսապատումի ճակատագրական դրուագները բանաստեղծելու ու իբրեւ անանց յուշիկներ Հայկակ պարմանիներին յանձնելու:

18 Բազմապէպ, 1845, հ. 22, 343:

19 ԶՕՊԱՆԵԱՆ Ա., Դէմքներ, Փարիզ 1924, 96:

Ալիշանը վիթխարի բանաստեղծական ժառանգութիւն է թողել՝ աւելի քան 1300 էջ։ Այդ էջերից 90ը «Նահապետի երգերն» են, որոնց բացառիկ մանրամասն ու համապարփակ քննութիւնը տուել է երախտառատ իդուարդ Զրբաշեանը։ Նահապետի հրաշալի, ԺԹ. դարակչսի հայ գրականութեան հունը փոխած տաք երգերի քննութիւնն այս յօդուածում կը շրջանցենք, մանաւանդ որ ինքը՝ Զրբաշեանն է ասում, թէ։ «Ալիշան-բանաստեղծի մասին յայտնուած կարծիքներն ել, լինեն ծաւալուն թէ կարեառօս, զրեք, բացառապէս վերաբերել են նահապետի երգերին։ Ի հարկէ, այսպիսի մօտեցման մէջ ինչ-որ անարդարացի քան կայ, քանի որ փաստորէն շրջանցում է Ալիշանի գրաբար պօեզիայի շատ հետաքրիեր կողմեր»²⁰։ Իսկապէս, անչափ հետաքրքիր բնութեամբ են ներկայանում վարդապետ հօր գրաբար երգերը՝ մանաւանդ պատմութեան հետ ուղիղ կապի համարնագրում

Ցայտնի փաստ է, որ Միթթարեան հայրերի աստուածաբաշ-նական փիլիսոփայութիւնը առաւելապէս հակուած է հայրաբանական-ջատագովական, յատկապէս թովմայ Աքուինացու մեկնաբանութեանը եւ, ի տարբերութիւն եւրոպական կլասիցիստների, նրանք «ռացիոնալիզմի սկզբունքները երբեք չհասկացան մարդկային բանականուրեան իրաւունքները հաստատելու, այն կրօնական կապանքներից ազատելու իմաստով»²¹։ Բանն այն է, որ մեր պատմական իրականութեան մէջ, պետականութեան իսպառ բացակայութեան ու երբեք չդադարած Փիլիկական ու հոգեւոր ասպատակութիւնների պարագայում, հայ եկեղեցին, ապա կրօնը բացառիկ ազգապահապահ առաքելութիւն եւ դերակատարութիւն են ունեցել հայոց կեանքում։ Ահա թէ ինչու հայկական կլասիցիզմը դրեթէ բացառում է ընդգծուած այն հակակրօնական ուղղուածութիւնը, որ յատուկ էր եւրոպական կլասիցիստական դպրոցին։

Հէնց այս փիլիսոփայութեան արձագանքների մէջ է ձեւաւորում Ղեւոնդ Ալիշանի՝ յատկապէս գրաբար բանաստեղծութիւնը։ Հայոց կենսապատումի բանաստեղծական նուագներում արիստոտէլականութեան մի նուրբ գունաւորում կայ, որ ջնջում է հերոսից սրբին անցնելու սահմանը, մի տեսակ միֆական շը-դարշով պատում պատմութեան դրուագները, որ բանաստեղծութ է վարդապետը։ Հայր Ալիշանը մեր կենսագրութիւնը վիպում է

20 ԶԲԲԱՇԵԱՆ Է., Գրողը և ժողովուրդը, «Ղեւոնդ Ալիշանի երգք նահապետի բանաստեղծական շարքը», 1989, 52:

21 ԶԲԲԱՇԵԱՆ Է., Գրողը և ժողովուրդը, «Դիդակտիկ պօեմները հայ գրականութեան մէջ», 1989, 42:

ըստ ազգային գաղափարի՝ մի հրաշակերտ հիւսուածքի մէջ ներառելով հայոց բնաաշխարհագրական, մշակութաբանական, կրօնի ու հաւատքի երեւումներն ու էթնիկական մեր կենսակերպի՝ աւանդոյթների, ծէսերի, կենցաղավարութեան նշանակիր դըրուագները, որոնք հայ հայրենիքի շուրջ ձեւաւորում են հայկականութեան մի նոոսվէրայ, բանականութեան ու հոգեւոր ստեղծումների մի զարմանահրաշ բնագիր, որի իմացական գնահատութեանն ու նորոգումին էր ուղղուած ժթ. գարի հայոց մտքի, բանականութեան ողջ տառապանքը: Նրա հերոսը ունի ազգային-հայկական իր նկարագիրը, նրա հերոսը սովորական անձ չէ, աւելին՝ նա անպայմանօրէն կրողն է պատմական այն առաքելութեան, որ դէտերմինացուած, պատճառաբանուած է ազգի, հայրենիքի ճակատագրով եւ ներբողուած քրիստոնէութեան, ազգային-ազատագրական պայքարի, էթնիկական ինքնութեան կենսահաստատ լրացով: Պատմական իմաստով Ալիշանի համար ճշմարիտ են այն իրադարձութիւնները, որոնք եղել են կամ Աստծոյ ուսմունքի համար կամ նրա անունով. նա հայոց պատմութիւնը քննում է քրիստոնէութեան լրացի տակ՝ հաւատքն ու ազգային լինելիութիւնն իրարից անանջատ իրողութիւններ համարելով: Նրա աշխարհայեացքը երբեք չի յանգում հոգեբանական երկուութեան, նրա համար իրական աշխարհն ու ոգու աշխարհը նոյնական են, եւ մի գեղեցիկ կատարելութեան մէջ յանդում են համատիեզերական ներդաշնակութեան ու ամբողջութեան: Աստուածորդին աշխարհ եկալ՝ լոյսը տարածելու, ապա եղաւ Աստծոյ ընտրութիւնը նոյի անունով, տապանի իջման տեղը, Հայաստանն իբրեւ աստուածատունկ դրախտ վկայուելը, յետոյ Հայկը՝ հայկականութեան սկզբնաւորողն ու նահապետը, հայոց եկեղեցու առաքելահաստատ լինելը, ապա Գրիգոր Լուսաւորիչ, Տրդատ արքայ, կոյսերի վկայաբանութիւնը, Կարմիր Վարդան, Վասակ, յանուն Քրիստոս-աստուածորդու հայոց մաքառման բանաստեղծական պատումը... Ահա հէնց այստեղ էլ «Հայրունի» հատորի գրաբար երգերում նա գտնում է ձեւի ու բովանդակութեան գրեթէ անթերի կատարելութիւնը, որովհետեւ չկայ կամ գրեթէ անհնարին է պատկերացնել ներբողեանից աւելի կատարեալ բանաստեղծական ձեւոյթ, երբ վարդապետը ներկայացնում է Լուսաւորչի վարքաբանութիւնը, կամ մահերդի առաւել դրամատիկ կատարում, քան է Գրիգոր Վարդապետի կամ Հռիփսիմէ կոյսի մահուան պատմութիւնը: Հայկի մասին, որ այրէ էր «ցանկալի եւ գեղապատշաճն, հաստաբազուկն եւ լայնանակատ», մի հրաշալի գեղարուեստական պաթոսով գունաւորուած իսուք է

դնում՝ հայրենասիրութեան ու հաստատուն կամքի թրթիռներ փոխանցելով իր ընթերցողին.

Աստղունք զուարբունքն լուսածրդիք,
Աստեղի, արփոյն հովտաց ծաղիկի,
Ճակատ պայծառ ըզվեհազինդ՝
Ըզդիկն եւ լանջ պըննեցէք պինդ.
Քաջութէանց հայր եւ հեղինակ
Նապկտոսէան դիւցայադրն Հայկ՝
Զարիականսըն ձըգէալ ձեռս
Թաւալգըլէ զուերին բեւեռս... (48)²²

Մաքուր կլասիցիստական դոկտրինով Ալիշանը ոչ միայն գրականութիւն է բերում ճշմարտութիւնը, թէ մարդու եւ ժողովուրդների ազատութիւնը բանականութեան յաւիտենականութեան օրէնքներին համապատասխանող վիճակ է, դրա բոնադատումը՝ բանական ներդաշնակութեան խախտում, այլեւ՝ անհատական պատասխանատուութեան ու պատմական առաքելութեան խնդիրն է արծարծում՝ հերոսի իր նախօրինակը վերցնելով Խորենացու «Պատմութիւն»ից, թէ՝ «Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնաւէտ, խիստ գանգուր մագերով, վառվոուն աչքերով, հաստ բազուկերով։ Սա քաջ եւ երեւելի հանդիսացաւ հսկաների մէջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների եւ դիւցազուների վրայ տիրապետելու։ Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բոնաւորութեան դէմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփուռում-տարածում էր բոլոր երկրի լայնութեան վրայ...»²³։ Պանծանքի ու պատասխանատուութեան այս զգացողութիւնն է Ալիշանը առնում դարերի հեռուներից ու փոխանցում ազգային գոյութեան ճակատադրական սահմանաբաժանին կանգնած իր ժամանակների մարդուն։ Խորենացու «Պատմութեան» այս գողարիկ դրուագի յիշատակումը բնաւ ինքնանպատակ չի եւ ոչ էլ պատահական Ալիշանի գիտական եւ արծակը բնագրերի զուգադիր քննութիւնը յստակ իմաստ է ձեռք բերում՝ հնարաւորութիւն տալով պարզելու ոչ միայն նրա պատմական «Յախասիրութիւնները», այլեւ դրանով պայմանաւորուած, նրա գեղարուեստական մտածողութեան առաջադրոյթները՝ թեմատիկ

22 Նուագիք, հատ. 3, Հայրութի, Վեճետիկ 1867, պատուհետեւ՝ հղումները այս հատորից, կմշուի համապատասխան էջը։

23 ՄՈՎԱԾՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Հայոց պատմութիւն, բրգմ. արևելահայերէն եւ ծնբ.-Ռ Ստեփանս Մալխանեանցի, Երևան 1997, 83։

ընտրութիւնը, որ փոխանցուում է գործից գործ, պատմական այս կամ այն անցքի կարեւորութեան դիտարկումը, ապա այն գեղարուեստական մշակման ենթարկելու, նուագի, երգի մտահղացումը:

Հետաքրքիր է դիտարկել մէկ-երկու դրուագ 1858ին, Վենետիկում տպագրուած, ապա 1867ին լրացումներով վերահրատարակուած «Նուագֆ»ների «Հայրունի» հատորից: «Այս սրբազն Ծերլը՝ Հայր Ալիշանը, պաշտամունք ունէր Գրիգոր Լուսաւորչի նկատմամբ, եւ, նրա անուան հետ կապելով հայոց դարձի ու առհասարակ մշակութային ողջ պատմութիւնը, բացառիկ սրբադասումով վկայած նրա վարքաբանութեան, աւետարանական գործունէութեան մէջ համադրում ու ներկայացնում է բոլոր այն գծերը, որոնք, իր պատկերացմամբ, յատուկ են աստուածամարդուն: Հինգերորդ դարից ինչ առնուած է Գրիգորի, Լուսաւորիչ-ների տոհմի՝ Սահակի ու Ներսէս Մեծի անունով, նա ընդունում է իբրեւ բացարձակ սրբախօսութիւն, իբրեւ անքննելի Բան ու աստուածամարդու կենսագրութիւն: Առանց դոյզն-ինչ երկմտութեան, պատմական փաստերը գեղարուեստական այնպիսի ներշնչանքով է ներկայացնում ու աստուածաբանական շղարշով պարուրում, որ արդիւնքում երեւակում է հայոց կենսագրութեան թերեւս ամենաճակատագրական դրուագներից մէկը, խոնարհումի ու խոնարհումի խօսքով օծուում են մարգարէներ ու սրբեր, որոնք անձնուրացութեամբ հաւատաւոր էին Քրիստոսի խօսքին ու նրա լոյսով հայոց ճանապարհն էին ուղեգծում: Լուսաւորիչ-ների տան պատումը Ալիշանը վկայել է «Սոփերք Հայկական-քում», «Քնար Հայկական-քում», «Արշալոյս Քրիստոնեութեան Հայոց»ում, եւ «Հայապատում»ի էջերում փորձելով մեռնող ազգի մէջ յակիտենական Աստծոյ Լոյսը ցոլացնել, սակայն բանաստեղծական շքեղ լրումի է հասցրել «Նուագներ»ում: Գրելով Գրիգորի վարչքը՝ մի ճրաշալի բանաստեղծաշարի մէջ (Գոչումն ի սուրբ Վիրապն, ի փոխումն Լուսաւորչին), Ալիշանը բարձրաթռիչ բառերով ներկայացնում է նրա առաքինի ու խոնարհ էութիւնը, տիեզերական այն իմաստութիւնը, որով նա դարձի բերեց մոլորեալ ու անհովիւ մի ողջ ժողովուրդ:

-Ի վիհ վիրապիդ գլխիվայրէալ՝ սուրբ Գրիգոր,

Ի խորոց սրտից պաղատախառն հառաչանս

Քեզ վերընծայել աղէկիզէալ իղձ երաւոր.

Հայ՝ Հայաստանէայց անդ առաւել քան եայս կէանս,

Հաստչին քո նմանէալ սիրել մըրմունջ մահացուաց (73)

Յաջորդ բանաստեղծութեան մէջ՝ «ի փոխումն Գրիգոր Լուսաւորչին»՝ Երկնքի ու Երկրի միջեւ կանգնած մի սրբազան, աստուածային պատկեր է Գրիգորը յիշեցնում.

-Խոր հառաջանի վերցուցին ըզշըրթունս,
Ծաւալեցաւ ծընունի սըրտին յընդհանուր.
Լուսանանանց տարաւ յերկինս սուրբ աշունս,
ի հընցէ սիրոյն հատաւ շունչ ի հուր
«Աստուած, կեցո՞ զհայաստան»,
Եւ աստ եկաց սըրտին բան: (76)

**որդիական խոնարհումի մէջ յաւիտենական լոյսի ու փըր-
կութեան պատմութիւն է պատմում.**

Հոփիսիմէ, 'նդ պատկեր քոյին
Առհասարակ հիացաւ մարդ.
Ազնուացար քան զեղեմին
Դու շընչաւոր շուշան ու վարդ... (80)

**Աստուածաբանական բացառիկ գիտելիքը բնաւ չի խաթա-
րել Ալիշանի հոգու հրճուաները՝ վկայաբանութիւններից առ-
նուած պատառները բանաստեղծական ներշնչանքի չքնաղ իրա-
ցումներում օծելու լոյսի, գոյների ու խորհրդաւորութեան զար-
մանահրաշ խաղերով:Աստուածամեծար զերմութեան ու խնկար-
կումի բացառիկ ծէս է, որդիական ծնրադիր աղօթք Քրիստոսի
դատերը՝ նազուկ ու լուսաշ կոյսին, շուշանի ու վարդի նմանու-
թեամբ եթերային Հոփիսիմէին, որ հարսնացաւ Աստուածորդուն.**

-Մայր կուսան, յիշէայ օօրդիս.
Նսպերիայ՝ ներմակ բեկեզ,
Քօղ կարմրորակ իւ պըմնի՝
Զայս Հայաստան բամշանդ եւ քեզ:
Էնն ըզիեզ յօսեցաւ անդ,
Աստ հարսնացար եաստուածորդի.
Բուռն հարեալ ի սուրբ տապանդ՝
Կայթէ մանկտիդ առագաստի: (81)

**Փառաբանական բովանդակութեամբ ու ճշմարիտ աստուա-
ծապաշտական յդումներով այս ձօներգը Երկիրը անսահման Եր-
կընքին է մօտեցնում՝ առ Աստուած անանձնական սիրոյ մէջ ճըշ-
մարիտ նկատելով ամէն զոհաբերութիւն: Առհասարակ, պատկեր-
ներով եւ համեմատութիւններով գրելը Ալիշանի մտածական հա-
մակարգի կարեւորագոյն նշաններից է, որ լքենդօրէն արտայայտ-**

ւում է մանաւանդ «Նուագներ»ի գրաբար քերթուածքներում։ Բառնտրութիւնից մինչեւ կլասիցիստական բանաստեղծութեան ոճ ու չափաբերութիւն, մի յաէրժօրէն ներդաշնակ ու կատարեալ նոյնութեան մէջ վերստեղծում են այն էլեգիկ միջավայրը, ուր մի ժամանակ ապրում էին առաքեալներն ու Աստուած։ Աւելին, ստանձնելով հայոց հոգեւոր եւ աշխարհիկ քաղաքակրթութեան նորոգութեան առաքելութիւնը, վարդապետը իւրովսանն հետամուտ էր քրիստոնէութեան եւ հայ եկեղեցու աւանդների կենդանացմանը՝ իբրեւ նոյնական սուբստանց, խորհրդանիշ հայկականութեան, իբրեւ հական բաղադրիչ հայոց ազգային գաղափարաբանութեան։ Հէնց այս բնագրում, եթէ Կարմիր Վարդանի մասին է գրում՝ Աւարայրի սոխակի հանգոյն հաւատքի ու կրօնի սիրուն ու պաշտամունքին է խօսքը ներբողում, իսկ Վասակը անէծքի ու անէծքի բառերով է յիշում։ Ուրեմն այլեւս զարմանալի չէ Հայր Ալիշանի բարընտրութիւնը, չարային կառոյցի յլացումը, այլեւ բանաստեղծական ձեւոյթը՝ (ներբողեան, ակրոստիքոս), որով լուծում է իր այնքան սիրելի Վարդանի, ապա արդէն ոռմանտիզմի հնարքով նրա հակոտնեայի՝ Վասակի կերպարները։

-Նահատակ վարդասիիւռ, արփիք ցընծան յոտիցդ առնուլ նեմ։
Եւ բազուկ Բարձրելոյն եյեռ յանմահից կանա վըսեմ
Զանուն քո ՎԱՐԴԱՆ՝ Հայոց շնորհաւոր։

Ի ձայն Հրաշալի եարութիւնն ԳԶ շարականի։ (108)

Հետաքրքիր գոյների մէջ է կերտում Վասակ Սեպուհի կերպարը՝ հերոսականութեան գծերով ու վսեմաշուրջ, քաջին արժանի բնութագրումով։

-Վահանայ եղբայր ես Վարդանայ եղբօրորդէակ՝
Սեպուհն եմ Վասակ, զինուորէալ Տեառլն Զօրութէանց.
Հայոց զուարթունք, ըգբաջաց գահն արկեֆ՝
Եւ Հայրենիացը դէմ զիս նըստուցէ։ (114)

Բացառիկ սիրով ու երկիւղածութեամբ իր հայրենիքի կենսագրական ասքը ժանեակի նման, թել-թել հիւսող բանաստեղծը, բնական է, թէ յորդահոս հեղեղի նման նզովքի ու անէծքի որպիսի բառերով պիտի բնութագրի ամենայն արարք, որ ցաւ է հայրենիքին ու ակունքն է սրբապիղծ դաւաճանութեան։ «Դատաստանք Վասակայ մատնիչի» քերթուածքում Ալիշանը կերտում է նզովեալ ուրացողի կերպարը՝ քայլ առ քայլ ներկայացնելով մի դժինմ ու ծանր պատմութիւն, մի արարք, որի համար մարդը անիծեալ է սերնդէսերունդ, ժառանգից ժառանգ։

-Վրեմք ֆեզ յերկնե, վրեմք ֆեզ յուխտեն զօր թողեր
Վրեմք յանմեղաց, վրեմք հայրենէաց անողոք.
Վրեմք ֆեզ կարդան ամայացեալ գերդաստանի,
Պարկեշտ կուսանի, հարսունի, փեսայի, որբի, այրիի,
Վրեմք ֆեզ անհաշտ ազատանին լեռնականի,
Վրեմք տըխրամած անարօր դաշտ հայրենիի (134)

**Հայր Ալիշանի պատմութիւնն ընդհատում չունի, ամբող-
ջական է, առանց միջանկեալ օղակների, ազգափրկութեան կո-
չուած իր հերոսներով, երբեմն՝ կերպարային ու բնաւորութիւն-
ների բեւեռացումներով։ Ոչինչ պատահական չէ բանաստեղծա-
կան այս չքնաղ հատորում։ ԺԼ. պատմական դրուագներում նա
գրում է ազգային Ոգու յայտնութիւնը, Միսիթարի տեսիլքով
փնտրում կորուսեալ Ոգին Հայաստանեաց։**

- Մըլիթար, զինչ խնդրես յինձն սրտագին։
- «Մայր իմ, ոչ ինչ, բայց զայն զօր դուն իսկ կամիս»։
- «Եղիցի»։ Մայրն ասաց, եւ եղ ի յերկինս... (194)

**Ստեղծագործական առումով, եւ ոչ էլ ժամանակային, նա
չի աւարտում այնտեղ, որտեղ աւարտում է Խորենացու նահա-
պետական, տիրաթախծոս հայրենապատումը, նրա սրտին հարա-
զատ են Ազաթանգեղոսի միֆական, աստուածաճանաչութեամբ
մողական աշխարհներումը, Բուզանդի՝ դէպքերի իրազեկու-
թեամբ, գեղեցկախօս պաճուճաւորումով վիպասանութիւնը, Կո-
րիւնի ճարտասանական վշտախօսութիւնն ու խղճի ու հաւատքի
հրեշտակապետները՝ Շնորհալին ու Միսիթարը։ Մրանից յետոյ
արդէն գալիս է «Նահապետի երգերի» ժամանակը։ Մարգարէի
խորքային արթնութեամբ նա կապակցում է դարերը ու ինչին
հայեցքը յառում է՝ թէ՛ «Հայրութի»ում, թէ՛ «Յուշիկներ»ում, ա-
մենակարեւորն է թւում։**

**Ալիշանի գեղարուեստական գործը շնչում է հայրենիքի ու
նրա պաշտամունքի սրբազն սարսուաներով։**

Իսկ այս բոլոր գործերի համար թերեւս իբրեւ բնաբան
կամ հանգանակ կարող է ծառայել «Նահապետի երգեր»ի երկ-
րորդ հրատարակչութեանը աւելացուած «Հայ հանճար» բանաս-
տեղծութիւնը, որ անցեալի փառքն ու հայրէնեայց տեսիլքն է
վկայում ու փոխանցում սերունդներին։

- Հա՛յ ազգ, հա՛յ հանճար, քունն է զինզ բռներ,
Քուն թանձար եւ երկայն, բայց ոչ մահ անյոյս.
- Ո՛վ արթընցընէ զազգն իմ ի նոր լոյս-.

Ես հազարներ տամ այնոր, տամ թիւրեր,
Որ զաշքըն բացնէր,
Ու չըլլար անցեր... (134)

Իսկ ժառանգորդական այդ կապը ամենեւին էլ ինքնանպատակ չէ. «Ով Հայկակ, ով հայ պատանիք, աղեկ քաղաքացի ըլլալու համար պէտք է քննել եւ սովորել զհայրենիս: Քննեցէլ եւ սովորեցէլ ուրեմն ազնիւ եւ բարեկեր Հայաստանը, իրրեւ հայրենիք ձեր եւ դայեակ ամենայն աշխարհի: Այդ քննութիւննդ, այդ ուսմունքդ յորդոր ըլլան քեզի աւելի քան զաւելի յարգելու զհայրենիս եւ մշակելու զայն՝ ըստ ամենայն նշանակութեան բանիս»²⁴, - ինքն է պատգամում:

Ահա այստեղից է սկսւում եւ այստեղ է աւարտւում Հայոց Ղեւոնդ Ալիշանի պատմահայեցութեան փիլիսոփայական հայեցակարգը:

ՍԻՐԱՆՈՅԾ ՄԱՐԳԱՐԵՍՆ

24 ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Յուշիկի հայրենիքաց հայոց, 62. աշխ., հս. Ա., 8:

Summary

THE HISTORICAL CONCEPTS OF ALISHAN IN THE VOLUME “HAYRUNI”

SIRANUSH MARGARYAN

Father Ghevond Alishan played an exceptional role in all the spheres of the history of Armenian spiritual creativity. The article examines the historical concepts of the great Armenologist, theologian, philosopher and poet Alishan, his views on the history of Armenia and its artistic incarnations, in particular, songs in the ancient Armenian from the volume “*Ayruni*”. The historical concept of Alishan recognizes two names as a world outlook principle: the Bible and Khoranatsi; Alishan formulates his vision of the Motherland through the reading of their fundamental signs. In his opinion, the natural-geographical space becomes the Motherland, when it is filled with content, including language, spiritual and material creations, the church and human exploits. Within this framework he creates his patriotic song on a theme chosen in accordance with the idea, in a unique poetic form. We have presented the history of the internal struggles of the national ideology in the scientific and artistic heritage of Alishan, the passionate searches of the Armenian thought aimed at the collection of fragments of recollections and memories from the distant historical times, with the help of which it will be possible to revive, breathe a new life into the dying Armenian reality. We have made theoretical generalizations concerning the Armenian studies of the activities of the Mkhitaryans, the recognition of the preservation of the nation and enlightenment, Europeanization and scientific character of the Armenian thought as a priority doctrine, while the personality and passionate creative searches of Father Alishan remained in the center of our attention. When examining his poetry, we have analyzed several works in the ancient Armenian, trying to present, using an example of an artistic original, some of Alishan's key observations concerning his worldview, in particular, the history of Armenia, as well as a peculiar style and references through which Alishan passes on his vision of Armenianness to the future generations. At the end, we have presented the conclusions proceeding from the scientific formulation of the question.